Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 6 (347) 17-31 մարտ, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Քեսաբի խնդիրը՝ միջազգային հանրության անտարբերության հետեւանք

Թուրքիայի եւ Ադրբեջանի հակահայկական, ընդդեմ Հայաստանի եւ հայության ծրագրերի շրջանակներում վերջին շրջանի թիրախը հայաբնակ Քեսաբն է:

Դարեր շարունակ պատմական հայկական Քեսաբում ապրող մեր հայրենակիցները Հայոց ցեղասպանության հարյուրամյակի շեմին ենթարկվեցին թուրքական եւ ադրբեջանական հերթական ոտնձգություններին:

Մեկ դար անց կրկնվում է պատմությունը: 100 տարի առաջ ցեղասպանվեց եւ հայրենազրկվեց արեւմտահայությունը: Այս անգամ արդեն հայրենազրկման վտանգը սպառնում է հայ ժողովրդի մեկ այլ հատվածին:

Թուրքիան եւ Ադրբեջանը գումար եւ մարդկային ռեսուրս չեն խնայում՝ ամեն կերպ աջակցելու իսլամական ծայրահեղական ահաբեկչական խմբավորումներին, ինչպես նաեւ անմիջական մասնակցություն են ունենում զինված խմբերի կազմում հայաբնակ բնակավայրերի վրա հարձակումների ժամանակ ու դրանց ոչնչացման համար:

Միջազգային հանրության անտարբերության հետեւանքով ստեղծված ամենաթողության եւ անպատժելիության մթնոլորտն է, որ 100 տարի անց Թուրքիային չի կաշկանդում ցեղասպանության փորձ իրագործելու համար:

Միջազգային հանրությունը եւ կազմակերպություններն իրենց անտարբեր կեցվածքով եւ Թուրքիայի ու Ադրբեջանի նկատմամբ առանց պատժիչ գործողությունների կիրառման՝ ինքնըստինքյան դառնում են նման երեւույթների մեղսակիցը:

Երեւույթը անքննելի է՝ Թուրքիան եւ Ադրբեջանը խնդիր ունեն ոչ միայն Հայաստանի եւ Արցախի՝ որպես պետությունների, այլեւ յուրաքանչյուր հայ անհատի հետ: Պետական ամենաբարձր մակարդակով արդեն ավելի քան մեկ դար ամենաբիրտ միջոցներով կազմակերպված հակահայկական արշավ են իրականացնում հայ էթնոսի դեմ:

Քաղաքակիրթ աշխարհում անընդունելի է այդ կեցվածքը: Համայն հայությունը եւ նրա անվտանգության երաշխավորներ հայկական զույգ պետությունները՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունները պարտավոր են ձեռնարկել ամեն հնարավորն ու անհնարինը՝ չեզոքացնելու նմանատիպ երեւույթները՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով այս խնդրի վրա:

Համամարդկային զարգացման կարեւորագույն անհրաժեշտություններից մեկը որեւէ հասարակության յուրաքանչյուր անհատի արժանապատիվ կյանքն է եւ ապահովությունը:

Վերոնշյալն ուղղակի վերացական հասկացություն չէ: Տեղի ունեցածն ու տեղի ունեցողը փաստում են, որ Թուրքիային եւ նրա քաղաքական կցորդ Ադրբեջանին զուտ տարածքային, տնտեսական կամ ազգային խնդիրներ չեն հուզում. նրանք խնդիր ունեն հայ կոչվող յուրաքանչյուր անհատի հետ՝ անկախ բնակության վայրից:

Եվ այստեղ է, որ միջազգային հանրությունը պարտավոր է շտկել եւ կարգի հրավիրել ամբողջ մարդկության զարգացման համար խնդիրներ ստեղծող Թուրքիային եւ Ադրբեջանին:

Դաշնակցությունը Արցախում վերահաստատեց իր հանձնառությունը

Մարտի 22-24-ը ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցավ ՀՅ Դաշնակցության մարմինների խորհրդաժողովը:

Աշխարհի քսան երկրներից, Հայաստանի Հանրապետությունից ու Արցախից մեկտեղված դաշնակցական պատասխանատուների քննարկման հիմնական թեմաներն էին ԼՂՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը, վերաբնակեցման հիմնահարցը, միջազգային ասպարեզում Թուրքիայի եւ Ադրբեջանի հակահայկական լոբբինգը չեցոքացնելու, Արցախին ի նպաստ աշխատանքներին նոր թափ ու բովանդակություն հաղորդելու խնդիրները, ԼՂՀ միջազգային ճանաչման հեռանկարները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում ու Արցախում կուսակցության հզորացումը:

Ժողովի ժամանակ անդրադարձ եղավ տարածաշրջանային վերջին զարգացումներին, Արեւմուտք-Ռուսաստան նոր դիմակայության պայմաններում Հայաստանի ու հայության անելիքներին, սիրիահայության աջակցության աշխատանքներին. մասնավորաբար քննարկվել են Քեսաբի վերջին իրադարձությունները եւ կուսակցության անելիքները:

Խորհրդաժողովը ամփոփել է վերոնշյալ ուղղություններով մինչեւ այժմ կատարվածը եւ նախանշել առաջիկա անելիքները:

Խորհրդաժողովում հատուկ ընդգծվել է Արցախի տնտեսության արդիականացման, Սփյուռքի ու Հայաստանի մտավոր ներուժով նոր տեխնոլոգիաների ներդրման, անվտանգության բարձրացման անհրաժեշտությունը:

Խորհրդաժողովը վերահաստատել է Դաշնակցության հանձնառությունը՝ հնարավոր բոլոր միջոցներով Արցախին աջակցելու, միջազգային ասպարեզում նրա շահերն ու իրավունքները պաշտպանելու հարցում:

Ժողովի ժամանակ մտահոգությամբ արձանագրվել է, որ վերջին միջազգային զարգացումների արդյունքում Հայաստանի Հանրապետությունը, Արցախն ու Սփյուռքը բարդ միջազգային մարտահրավերներ են դիմագրավում, որոնց հաղթահարումը համախմբված կամք, վճռականություն եւ ամենօրյա աշխատանք է պահանջում, այլապես կարող է վտանգվել մեր ազգային-պետական նպատակների իրականացումը: Շեշտվել է, որ մենք պարտավոր ենք հենվել միմիայն հայության հավաքական ներուժի վրա եւ համախմբված գործողություններով չեզոքացնել առկա սպառնալիքները:

Դաշնակցության համար շարունակում է գերխնդիր մնալ Արցախյան հաղթանակի վերջնական ամրագրումը, Արցախի բնակչության բարեկեցությունը, խաղաղ, կայուն զարգացումն ու նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՅԴ Միջմարմնական խորհրդաժողովի մասնակիցներին ընդունել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպման ընթացքում արծարծվել են Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ներքին եւ արտաքին քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր:

Ինչպես տեղեկացնում են ԼՂՀ նախագահի տեղեկատվության գլխավոր վարչությունից՝ երկրի ղեկավարը պահանջված է համարել նման հանդիպումները եւ երախտագիտություն հայտնել ներկաներին՝ միջազգային տարբեր ատյաններում արցախյան հիմնախնդրի օբյեկտիվ ներկայացման, Արցախի միջազգային ճանաչման, տարբեր պետություններիի հետ կապերի հաստատման ու ամրապնդման, մեր հանրապետության զարգացման եւ զորացման ուղղությամբ նրանց հայրենանվեր գործունեության համար. «Ուրախ եմ, որ առիթ ունեմ հանդիպելու ձեզ հետ եւ ողջունելու բոլորիդ: Նման հանդիպումները ես պահանջված եմ համարում մի շարք պատճառներով, առաջին հերթին՝ կարեւորելով Հայ Հեղափոխական Դաշնակցության տեղն ու դերը համազգային խնդիրների լուծման եւ մեր ժողովրդի շահերի պաշտպանության գործում: Այս հանդիպմանը ներկա են մարդիկ, ովքեր նշանակալի գործունեություն են ծավալում տվյալ ուղղություններով, ինչպես նաեւ ակտիվորեն աշխատում միջազգային ատյաններում արցախյան հիմնախնդրի օբյեկտիվ ներկայացման, Արցախի միջազգային ճանաչման եւ տարբեր պետությունների հետ կապերի հաստատման ու ամրապնդման հարթություններում: Մեր հանդիպումների ժամանակ ես միշտ նշում եմ այդ մասին, եւ հիմա, օգտվելով առիթից, ուզում եմ եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնել ձեզ նման հայրենանվեր աշխատանքի համար:

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման եւ երկկողմ հարաբերությունների հաստատման, արցախյան հիմնախնդրի արդարացի լուսաբանման գործում չափազանց մեծ է Հայ Յեղափոխական Դաշնակցության եւ նրա տարբեր ստորաբաժանումների դերը: Առանց ձեր մշտական աջակցության եւ տարբեր պետություններում ու միջազգային ատյաններում իրականացվող ամենօրյա քրտնաջան աշխատանքի դժվար կլիներ հասնել շոշափելի հաջողությունների:

➔ 2

Արցախի հարցով մեզ համար նահանջն անթույլատրելի է

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի հետ

- Արցախում առաջին անգամ էր, որ գումարվեց ՀՅԴ Միջմարմնական խորհրդաժողով: Արդյո՞ք դա պատահականություն էր:

- Բնականաբար, դա պատահականություն չէ: Դա քաղաքական որոշման արդյունք է: Ես մի առիթով օրերս ասել եմ, որ մենք Արցախ չենք այցելել, մենք ապրում ենք Արցախով: Ժամանակին մենք եղել ենք Արցախյան ազատամարտի առաջին գծում, զենքը ձեռքներիս ենք պաշտպանել այս երկիրը եւ ապահովել նրա ազատությունը: Այսօր կյանքը մեզ ստիպել է, որ տարբեր հարթակներում, այդ թվում՝ միջազգային բեմերի վրա Ղարաբաղի համար մարտը շարունակենք: Այդ մարտը կարող է տարբեր դրսեւորումներ ունենալ՝ առաջին գծում զենքը ձեռքիդ կռվելուց մինչեւ ամբողջ կյանքիդ ընթացքում մաքառելով եւ աշխատելով: Աշխատանք դիվանագիտական մարզում, աշխատանք քաղաքական մարզում, աշխատանք տնտեսական մարզում, բայց նույն նպատակի համար՝ Արցախի համար: Այդ առումով՝ մենք խորթ չենք Արցախին, մենք նոր չենք այստեղ: Մեր կազմակերպությունը ներկայություն ունի Արցախում, մեր շարունակությունն է Արցախում, որովհետեւ Արցախում ունենք կառույց եւ գուցե այդ առումով մենք զանազանվում ենք բոլոր մյուս հայկական կազմակերպություններից: Միայն մենք ենք, իբրեւ համահայկական կուսակցություն, որ Արցախում ներկայություն ունենք: Միայն մենք ենք, իբրեւ Հայաստանի Հանրապետության մեջ աշխատող կուսակցություն, որ նաեւ աշխատում ենք այստեղ, իսկ սա բավական բան է ասում: Սակայն չպետք է մոռանանք, որ մենք մեկ ամբողջություն ենք, մեր կազմակերպությունը, Արցախից դուրս աշխատող բոլոր կառույցները Արցախը համարել են իրենց գերխնդիրը: Այդ առումով՝ Արցախը դարձել է մեր ամբողջական կուսակցության գերխնդիրը, եւ դրա համար մենք մեր հնարավորությունների եւ կարելիությունների առյուծի բաժինը տրամադրել ենք Արցախին: Այսօր ավելի ու ավելի ենք համոզվում, որ այդ գործելաոճը արդարացված է, որովհետեւ պայքարը չի ավարտվել: Մենք համոզված ենք, որ մինչեւ վերջնական արդյունք մենք պետք է լինենք պատրաստ, պետք է լինենք ամուր, վճռական, որպեսզի գրանցենք մեր ցանկալի արդյունքը եւ առաջ անցնենք: Իսկ վերջնական արդյունքը Արցախի միացումն է Հայաստանին:

- Դաշնակցության օրակարգում Արցախի հետ կապված ի՞նչ հարցեր գոյություն ունեն:

- Նախ եւ առաջ՝ գոյություն ունի Արցախի դե ֆակտո անկախության փաստն արձանագրելու խնդիր: Այդ առումով՝ երեւի թե դե ֆակտո անկախությունն ավելի կարեւոր է, քան իրավաբանորեն ինչ-որ ձեւակերպումները, սակայն այնուամենայնիվ դա եւս գոյություն ունեցող խնդիր է: Այսօրվա դրությամբ միջազգային քաղաքական կյանքը լարված է ու ալեկոծված: Ստեղծվում է նոր աշխարհակարգ, լարվում եւ կարծրանում են Արեւմուտք-Ռուսաստան փոխհարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունը եւ մենք՝ իբրեւ հայ ժողովուրդ, հայտնվել ենք ինչ-որ ճակատում: Սակայն մենք իրավունք չունենք թույլ տալ, որ Արցախի հարցը Ռուսաստան-Արեւմուտք լարվածության ստվերի մեջ հայտնվի:

Մենք նաեւ չպետք է թույլ տանք, որ Հայաստանի Հանրապետություն-Արեւմուտք հարաբերության մեջ սպասվող լարվածությունը ստվերի տակ թողնի Արցախը: Հայաստանի ներքաղաքական կյանքը եւս հանդարտ չէ եւ առկա իրավիճակը հղի է նորանոր անակնկալներով: Այստեղ եւս իշխանություն-ընդդիմություն պայքարի մեջ պետք է զգուշանանք, որ Ղարաբաղի հարցը չմնա այդ հարաբերությունների ստվերի մեջ: Կարեւորն այն է, որ ինչպես մեզ համար, հայ ժողովրդի քաղաքական այլ ուժերի համար եւս Արցախը մնա հստակ, պայծառ, առանձին եւ մեծ կարեւորությամբ խնդիր: Մենք պետք է կարողանանք Արցախի հարցը՝ որպես հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի արդար հարց, ներկայացնել աշխարհին, որտեղ պետք է ցույց տանք մեր վճռականությունը եւ միասնականությունը՝ Արցախին եւ Արցախի հարցին սատարելու առումով: Ես համոզված եմ, որ սա շատ կարեւոր հանգամանք է: Մենք չպետք է թույլ տանք, որ որեւէ երեւույթ իր ստվերը գցի Արցախի հարցի վրա: Եվ այդ հարցի հիմնական երաշխավորը մենք ենք, մենք՝ իբրեւ հայ ժողովուրդ: Ես մեր կուսակցությանը համարում եմ այդ հարցի երաշխավորը: Ես կուզեի, որ բոլորը մեզ հետ միասին ճիգ թափեն, որ ներքին խնդիրները պատճառ չդառնան, որպեսզի Ղարաբաղի հարցի հետապնդումը վիրավորվի: Միայն այդպիսով կկարողանանք համայն աշխարհին ապացուցել, որ Արցախը ամբողջությամբ վայելում է հայ ժողովրդի համակրանքը, եւ կապացուցենք, որ Արցախի հարցով մեզ համար նահանջն անթույլատրելի է: Այս վճռականությունը եւ միասնականությունը գլխավոր նախապայմանն է, որպեսզի կարողանանք հաղթահարել միջազգային քաղաքական ալեկոծված այս փուլը: Աստված մի արասցե՝ որեւէ կորուստ ունենանք:

- Ժողովին ներկա էին նաեւ ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի պատասխանատուներ ու աշխատակիցներ: Առաջիկայում շարունակվելո՞ւ են արդյոք ակտիվ աշխատանքները Արցախի միջազգային ճանաչման ուղղությամբ:

- Բնականաբար, այդ աշխատանքները շարունակվելու են, եւ այդ աշխատանքների արդյունքում ակնկալվում են նորանոր նվաճումներ: Ես դրանում չեմ կասկածում: Դա մեր պայքարի մի մասն է եւ մեր էության անբաժան մասը: Արդեն կան հաջողություններ, եւ ես վստահ եմ, որ նորանոր հաջողություններ են լինելու: Մեզ այդ հարցում չպետք է մտահոգի շուտափույթ արդյունքներ ունենալու խնդիրը: Մեզ պետք է ոգեւորի, պետք է ամրացնի այն փաստը, որ արդեն անկախ Արցախը երկու տասնամյակ բոլորած պետություն է: Սա շատ ավելի մեծ արժեք ունի: Արցախի դե յուրե ճանաչումը պետք է գա համալրելու եւ ամբողջացնելու ձեռք բերված նվաճումները:

- Վերջերս փորձեր արվեց նմանություններ գտնել Ղրիմի եւ Արցախի ինքնորոշման իրավունքների միջեւ: Ձեր տեսակետն այդ հարցի շուրջ ինչպիսի՞ն է:

- Պատմական երեւույթները կարող են ինչ-որ տեղ իրար նմանվել եւ ինչ-որ տեղ ունենալ ընդհանուր գծեր, բայց ամեն մի հարց ունի իր յուրահատկությունները: Եթե ասեմ, որ Արցախի հարցն ունի իր յուրահատկությունը, դա չի նշանակում, որ ուզում եմ հակադրվել Ղրիմի ինքնորոշման ճիգ ու ջանքին: Եւ եթե ասեմ, որ ունի նմանություններ, դա չի նշանակի, որ ուզում եմ ինչ-որ բան ընդհանրացնել: Արցախի հարցը իր պատմական հոլովույթով, իր ընթացքով յուրահատուկ հարց է, եւ մենք չենք շահի, որ Արցախի հարցը որեւէ հարցի հետ նմանեցնենք: Բայց մի բան գոյություն ունի, որ ժողովուրդների ինքնորոշման խնդիրը սկսվել է գնահատվել բոլորի կողմից: Հենց դա է այն կարեւոր զուգակցումը, որից պետք է կարողանանք հնարավորինս լավագույն արդյունքներ քաղել:

- 2015 թվականին նշելու ենք Ցեղասպանության 100-ամյա տարելիցը: Այսօր Դաշնակցությունը Հայոց ցեղասպանության հարցում ի՞նչ ծրագրեր է առաջնային համարում:

- Ցեղասպանության 100-ամյակը ուղղակի առիթ է, որ մենք կարողանանք մեր պայքարի մեջ մի նոր հանգրվան սկսել: Ես այդ հանգրվանը կանվանեի պահանջատիրական հանգրվան: Մեզ համար 100-ամյակի ոգեկոչումը առավելաբար քաղաքական կարեւորություն ունի: 100-ամյակի ոգեկոչումը ինչ-որ պատմական թվականի նշում չէ, ծիսակատարություն չէ: Մենք համոզված ենք, որ 100-ամյակը առիթ է, որը մենք պետք է օգտագործենք քաղաքականորեն նոր նվաճում արձանագրելու համար: Համոզված եմ, որ այս նպատակն իրականացնելու համար արդեն իսկ առկա են նախապայմաններ: Առաջին քայլն արդեն իսկ արձանագրվեց, երբ մեր զույգ կաթողիկոսները մեր կրոնական, եկեղեցական ժառանգությանը տեր կանգնեցին եւ, այսպիսով, հայ ժողովուրդը փաստորեն անցում կատարեց դեպի նոր հանգրվան: Ես հենց դրանով եմ կարեւորում 100-ամյակը՝ համարելով այն պայքարի որակի եւ ուղղվածության առումով անկյունադարձային:

Պատրաստեց Անի ԱՂԱՏՅԱՆԸ

Դաշնակցությունը Արցախում վերահաստատեց իր հանձնառությունը

1 ← Ակնկալում ենք վերոհիշյալ ուղղություններում մեր փոխգործակցության շարունակական ընդլայնում ու խորացում:

Մեր բոլոր հաջողությունների ամենահուսալի գրավականներից մեկը Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունն է եւ նրա շարունակական ամրապնդումը: Կարելի է վստահաբար ասել, որ արդեն իսկ ստեղծվել է մի համակարգ, որի ներքո աշխարհասփյուռ հայությունը կազմում է մի ամբողջություն՝ անկախ քաղաքական եւ աշխարհագրական սահմաններից ու հեռավորությունից: Գիտակցելով այս ամենը՝ պետք է աշխատենք ավելի մեծ պատասխանատվության զգացումով՝ միշտ մտապահելով, որ հայոց եռամիասնության հզորությունը կախված է նրա յուրաքանչյուր օղակից: Մեր եռամիասնությունն է, որ մեզ դարձնում է անպարտելի: Սա սրբություն է, եւ մեզնից յուրաքանչյուրը պետք է պաշտի այն ու պահպանի՝ հանուն մեր հետագա բոլոր հաղթանակների»,- իր ելույթում մասնավորապես նշեց Արցախի նախագահը:

Հանդիպման ժամանակ նախագահ Սահակյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված ակտիվ գործունեության համար Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայ Դատի Եվրոպայի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանին պարգեւատրել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Միջմարմնական խորհրդաժողովի շրջանակներում ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի ներկայացուցիչները հանդիպել են նաեւ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանի հետ:

Հանդիպման ընթացքում կարծիքներ են փոխանակվել մի շարք հարցերի, այդ թվում՝ Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ հակամարտության կարգավորման ներկայիս փուլի եւ Արցախի միջազգային ճանաչման գործընթացի վերաբերյալ: Անդրադարձ է կատարվել նաեւ տարածաշրջանային վերջին զարգացումներին:

ԼՂՀ արտաքին գործերի նախարարը կարեւորել է նման հանդիպումների անցկացումը՝ համատեղ քայլերի հնարավորությունները քննարկելու եւ համագործակցության օրակարգն ընդլայնելու առումով:

Հանդիպման ավարտին նախարար Կարեն Միրզոյանը ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերի ներկայացուցիչներին է հանձնել ԼՂՀ ԱԳՆ հուշամեդալներ:

Մարտի 25-ին, մինչ Արցախից մեկնումը, Հայ Յեղափոխական Դաշնակցության Միջմարմնական խորհրդաժողովի մասնակիցները խորհրդաժողովի ավարտից հետո հարգանքի տուրք մատուցեցին եւ ծաղիկներ դրեցին Աշոտ Բեկորի հուշարձանին: Այնուհետեւ այցելեցին Ստեփանակերտի հուշահամալիր, որտեղ ծաղիկներ խոնարհեցին Արթուր Մկրտչյանի շիրիմին եւ հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան ազատամարտում նահատակվածների հիշատակին:

«ԱՊԱՌԱԺ»

Ադրբեջանցիներն ու թուրքերն աշխատում են վարձկանների միջոցով, իսկ մենք՝ հոգով

Հարցազրույց ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանի հետ

Վերջերս Արցախում տեղի ունեցած ՀՅԴ Միջմարմնական խորհրդաժողովի շրջանակներում Արցախ էր այցելել նաեւ ՀՅԴ Եվրոպայի Հայ Դատի գրասենյակի պատասխանատու Գասպար Կարապետյանը, ով ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից պարգեւատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

Ձեզ ենք ներկայացնում Գասպար Կարապետյանի հետ «Ապառաժ»-ի հարցազրույցը:

- Հայ Դատի գրասենյակները ի՞նչ աշխատանքներ են ծավալում Եվրոպայում եւ, մասնավորապես, ի՞նչ աշխատանքներ են տարվում Արցախյան հիմնախնդրի հետ կապված:

- Անցյալ տարվանից Արցախի համար բավական աշխատանքներ կատարվեցին. հիմնեցինք Հայաստանի հետ բարեկամության խումբ եվրոպական խորհրդարանում: Ապրիլի 24-ին նրանց Հայաստան ենք բերել, այցելել Ծիծեռնակաբերդ: Եվրոխորհրդարանի եւ երկու ֆրանսիացի ազգային պատգամավորներից բաղկացած պատվիրակությունն այցելեց Արցախ, ունեցան տարբեր հանդիպումներ. դա մեծ ազդեցություն ունեցավ եվրոպական խորհրդարանի վրա: Նրանք այցելեցին Արցախ՝ որպես բարեկամական խմբեր: Թեւ այս բարեկամական խմբերը պաշտոնական չեն, խորհրդարանի մաս չեն կազմում, սակայն նրանք գործում են խորհրդարանի ներսում: Այդ խմբերի մեջ էին բավականին հայտնի դեմքեր: Անցյալ տարի հոկտեմբերի սկզբին կազմակերպեցինք գիտական խորհրդաժողով Արցախի պետական համալսարանի եւ Ֆրանսիական որոշ համալսարանների հետ, որին ներկա էին դասախոսներ, բելգիացի սենատորներ, այլ քաղաքական դեմքեր, նաեւ լրագրողներ, որոնց մեջ կար եւ թուրքական ծագում ունեցող լրագրող: Հոկտեմբերի 14-15-ին կազմակերպեցինք եվրոպահայության երրորդ համագումարը, որին մասնակցեցին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը եւ արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանը:

ԼՂՀ նախագահը պաշտոնապես մուտք գործեց Եվրոպական խորհրդարան՝ ելույթ ունենալով ամենալավ սրահում եւ առիթ ունենալով ԼՂՀ պաշտոնական դիրքորոշումները հայտնելու: Սա պատմական դեպք էր, որովհետեւ առաջին անգամ չճանաչված պետության նախագահը կարողացավ պաշտոնապես մուտք գործել Եվրոպական խորհրդարան եւ իր խոսքն ուղղել բոլոր ներկաներին, եւ՝ ոչ միայն, քանի որ այդ ելույթի խոսքերն ուղարկվեցին բոլոր պատգամավորների գրասենյակներ: Նաեւ նախագահը առիթ ունեցավ պաշտոնական հանդիպումներ ունենալ 12 եվրոպատգամավորների հետ, բարեկամության խմբի անդամների հետ: Հանդիպումները հրապարակվեցին լրատվամիջոցներում: Հանդիպում ունեցավ բելգիացի սենատորների հետ, նիդեռլանդների ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի հետ, եւ այլն: Սա շատ մեծ առաջընթաց էր: Մի քանի զեկույցներ ունեցանք Արցախի հիմնահարցի հետ կապված: Պետք է նաեւ նշեմ, որ արդեն երկու տարի է՝ այն բառապաշարը, որ օգտագործում էին եւրոպացիները, հիմա չեն գործածում, մասնավորապես «գրաված տարածքներ» արտահայտությունը:

- Ինչպե՞ս է իրականացվում ադրբեջանա-թուրքական լոբբինգը Եվրոպայում եւ ի՞նչ հակաքայլեր են իրականացնում Հայ Դատի գրասենյակները:

- Թուրքիայի լոբբինգին մենք ծանոթ ենք տարիներ ի վեր. մենք իրար շատ լավ ենք ճանաչում: Ադրբեջանցիները նոր ֆակտոր են. նրանք հիմնականում սկսեցին ավելի ակտիվանալ 2002 թվականից՝ կապված իրենց կարողությունների աճի հետ: Ինչ վերաբերում է նրանց ֆինանսական կարողություններին, ապա պետք է նշեմ, որ մենք նրանց հետ մրցել չենք կարող: Նույնիսկ եթե ՀՀ-ն իր բոլոր ռեսուրսները տրամադրի, միեւնույն է՝ չենք կարող մրցել: Նաեւ պետք է նշեմ, որ մենք մեր գործունեության համար ՀՀ-ից մեկ եվրո անգամ չենք ստանում. մեր



բոլոր ծախսերը հոգում է ՀՅԴ Բյուրոն, նաեւ մեզ օժանդակում են մեր եվրոպահայ հայրենակիցները, որոնք ունեն այդ հնարավորությունը: Կարեւորը հարցերը ճիշտ ծրագրելն ու հասկանալն է, թե որտեղ պետք է ներկայացնես ու ինչպես, եւ շատ անգամ խուճապահար չպատասխանես թշնամուդ եւ ամեն անգամ չպատասխանես. պետք է պատասխանես ուղղորդված՝ ում որ պետք է: Մենք ամեն ինչ անում ենք նախապես ծրագրված, եւ ամեն անգամ, երբ իմանում ենք, թե ինչ պետք է անեն ադրբեջանցիները, որոշում ենք՝ թե արդյոք պետք է հակազդենք եւ ինչպես: Մինչեւ հիմա հաջողության ենք հասել: Սակայն պետք է նշեմ՝ իրենց մարդկային ներուժն անհամեմատելի է մեր մարդկային ներուժի հետ: Սակայն կան Հայ Դատի հանձնախմբեր ամբողջ Եվրոպայի տարածքում, որոնց հետ անմիջական կապ ունենք: Այս պարագան մեզ շատ մեծ առավելություն է տալիս, քանի որ մեր աշխատանքներն իրականացնում ենք համադրաբար:

Կան մեր գաղութները, կա մեր ժողովուրդը, կա մեր տարիների փորձառությունը, որ ադրբեջանցիները փորձում են ընդօրինակել: Նրանք աշխատում են վարձկանների օգնությամբ, մենք՝ մեր հոգով. սրանք չափազանց տարբեր բաներ են:

Ամեն անգամ, երբ կազմակերպում ենք որեւէ միջոցառում՝ Արցախի հետ կապված, մեծ աղմուկ են բարձրացնում, սակայն դա մեզ չի խանգարում մեր գործը վարելու: Այդպես եղավ, երբ Արցախ բերեցինք եվրոպատգամավորներին, եւ նրանց տված մեր պատասխանն այն էր, որ այս մարդիկ ազատ են եւ կարող են այցելել իրենց իսկ ցանկացած վայրը: Պետք է ասեմ, որ վերջին տարիներին մեր խորհրդարանական դիվանագիտությունը բավականին բարելավվել է եւ արդյունքներ է տալիս:

Դրա վառ օրինակը Եվրանեստին մեր մասնակցությունն է: Եվրանեստին մասնակցում էին 6 երկրներ՝ Մոլդովան, Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը, Հայաստանը, Բելառուսը (կազմից դուրս է եկել), որոնցից 4-ը՝ Մոլդովան, Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը, համաձայնություն ունեին միմյանց հետ, Հայաստանը մենակ էր, բայց եւ այնպես՝ մեր դիվանագիտության շնորհիվ, Արտակ Զաքարյանի եւ Վահան Հովհաննիսյանի ղեկավարությամբ ոչ միայն կարողացանք հակազդել, այլեւ շատ անգամ կարողացանք ադրբեջանցիներին պարտության մատնել: Հայ Դատ եւ պետություն համագործակցությունը տալիս է իր պտուղները:

- Արդյո՞ք կա համագործակցություն ՀՅԴ Արցախի կառույցի հետ, եւ ինչպիսի՞ն է այդ համագործակցությունը:

- Պետք է նշեմ, որ Արցախի Հանրապետության հետ մենք շատ սերտ հարաբերություններ ունենք, եւ պետք է նշեմ անշուշտ ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի դերը, որի հետ իհարկե մենք սերտ գործակցություն ունենք: Ապառաժի նախաձեռնությամբ, Արցախի ազատագրական շարժման 25-ամյակի առիթով կազմակերպեցինք հարցազրույցներ եւ եվրոպական խորհրդարանի անդամների հետ: Եվրոպական խորհրդարանի որոշ անդամներ հայտարարություններով հանդես եկան, որտեղ նշեցին, որ ընդունում են Արցախի ժողովրդի անկախություն ունենալու իրավունքը: Շնորհակալ ենք Արցախի Ապառաժի կառույցին նման նախաձեռնության եւ մեզ այս հարցում ուղղորդելու համար:

- Եվրոպական մի շարք երկրներում, մասնավորապես Ռումինիայում, Լեհաստանում եւ Ավստրիայում բացվեցին Հայ Դատի գրասենյակներ: Ինչո՞վ էր պայմանավորված հենց այդ երկրներում Հայ Դատի գրասենյակներ բացելը:

- Ամեն ինչ նախապես ծրագրված էր: Ռումինայում հայերը շատ վաղուց են ապրում եւ մեծ դերակատարություն են ունեցել միշտ, սակայն քաղաքական կյանքում չեն կարողացել լուրջ աշխատանքներ տանել: Եվ այսօր Ռումինիայում կա Մուստաֆա Քեմալի, Հեյդար Ալիեւի արձանները, եւ շատ անգամ Ռումինիայի արտաքին գործերի նախարարները մեզ համար վատ հայտարարություններով են հանդես եկել, ինչպես նաեւ Եվրոպական դատարանի որոշ ռումինացի պատգամավորների հետ ունենք լուրջ խնդիրներ, դրա համար անհրաժեշտություն կար հակազդելու այս ամենին: Արդեն որոշ պատգամավորների հակազդել ենք եւ առաջիկայում, հուսանք, ավելի բեղմնավոր աշխատանք կունենանք: Լեհաստանը բավական ազդեցիկ է Եվրոպական խորհրդարանում, եւ այդ երկիրն է, որ Շվեդիայի հետ առավել շատ զբաղվել է մեր տարածաշրջանով: Եվրանեստի 60 պատգամավորներից, որ ունի Եվրոպական խորհրդարանը, 18-ը լեհ է, ուրեմն հասկանալի է, որ այդ երկիրը չէինք կարող անտեսել եւ հետաքրքրված չլինել: Ավստրիայում ունեինք երկու ընկեր, որոնք աշխատում էին անհատաբար, սակայն պետք էր այնտեղ գրասենյակ ունենայինք, քանի որ գտնվում է Կենտրոնական Եվրոպայում. փոքր երկիր է, սակայն կշիռ ունի: Անշուշտ, սա դեռ վերջնակետը չէ: Մենք այլ շրջանների մեջ մինչեւ տարվա վերջ կունենանք Հայ Դատի հանձնախմբեր, եւ պետք է փորձենք ամբողջ Եվրոպայում մեր ցանցը տարածել, քանի որ սա մեր ուժն է՝ ի հակակշիռ ադրբեջանաթուրքական միլիոնավոր դոլարների: Իրենք ունեն իրենց միլիոնները, վարձկանները, սակայն մենք ունենք մեր գաղութները, մեր նվիրյալ հայերը եւ մեր արդար պայքար ունենալու իրավունքը:

Պատրաստեց Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԸ

Դաշնակցականների հանդիպումը Հադրութում

Մարտի 18-ին ԼՂՀ Հադրութ քաղաքում ՀՅԴ ԿԿ անդամները հանդիպում ունեցան Հադրութ քաղաքի բնակիչների հետ: Հանդիպումը տեղի ունեցավ Հադրութի շրջվարչակազմի շենքի դահիլճում: Ներկա էին Հադրութի շրջվարչակազմի ղեկավարը, շրջվարչակազմի աշխատողներ, քաղաքացիներ: Հանդիպման նպատակը քաղաքացիներին հուզող հարցերի շուրջ քննարկում ձեւավորելն էր:

Ելույթներով հանդես եկան ՀՅԴ Արցախի ԿԿ անդամներ Լեւոն Հայրյանը, Արթուր Աղաբեկյանը եւ Վահրամ Բալայանը:

ՀՅԴ ԿԿ անդամ, ԼՂՀ ԱԺ պատգամավոր Վահրամ Բալայանը ներկայացրեց ԱԺ-ում Դաշնակցության գործունեությունը՝ ընդգծելով, որ անկախ կուսակցական պատկանելությունից, բոլորը պետք է ձեռք ձեռքի տան եւ լուծեն երկրի առջեւ ծառացած կարեւորագույն խնդիրները:

«ՀՅԴ-ն ստեղծվել է ծառայելու իր ժողովրդին եւ մեկ դարից ի վեր պատվով է կրում եւ դեռ կրելու է այդ պատասխանատվությունը: Երբ որ ինձ հարցնում են, թե ինչու եմ անդամագրվել ՀՅԴ շարքերին, իմ պատասխանը հետեւյալն է լինում. որպեսզի Դաշնակցության հնարավորությունները օգտագործեմ ի շահ մեր հայրենիքի: 1890 թվականից մինչ այսօր Դաշնակցությունն այնտեղ էր, որտեղ ժողովուրդը պաշտպանության կարիք ուներ, սակայն խորհրդային տարիներին ժողովրդի մեջ են մտցրել այն գաղափարը, որ Դաշնակցությունը չարիք է, ազգամիջյան պատերազմներ է հրահրում: Ցավոք սրտի, դեռ այն հասարակարգում ապրած մարդկանց մեջ մտավախություն կա դեպի Դաշնակցությունը, սակայն Արցախյան գոյամարտի տարիներին Դաշնակցությունը, վերահաստատվելով հայրենիքում, ապացուցեց, որ միշտ եղել է իր ժողովրդի ծառան ու զինվորը»,- ասաց Վահրամ Բալայանը:

ՀՅԴ ԿԿ անդամ Լեւոն Հայրյանը կարեւորեց այս հանդիպումը նրանով, որ կուսակցություն-ժողովուրդ շփումը չպետք է դադարի, այլապես անիմաստ կլինի կուսակցությունների գործունեությունը:

ԼՂՀ փոխվարչապետ, ՀՅԴ ԿԿ անդամ Արթուր Աղաբեկյանը հորդորեց հադրութցիներին՝ ոչ թե պլանավորել իրենց կյանքը մոտակա 1 տարվա, այլեւ 100 տարվա կտրվածքով, այլապես վտանգված կլինի այն ամենը, ինչ հիմա ունենք:

«Ժամանակները փոխվել են եւ այսօր անթույլատրելի է կարճաժամկետ ծրագրերը, այսօր իշխանությունները պարտավոր են երկարաժամկետ պլաններ իրականացնել:

Մեծ հավատն ու կամքն է, որ մեզ իրավունք է տվել այս հողի վրա ապրելու, եւ այսօր մենք՝ դաշնակցականներս այստեղ ենք ձեզ համոզելու՝ այս հողի վրա երկարաժամկետ կյանք պլանավորելու: Դաշնակցությունը հենց այդ ուղին է ընտրել՝ ծրագրելով իր քաղաքականությունը մոտակա մի քանի տասնյակ տարիների համար»,- նշեց նա:

Ելույթներից հետո քաղաքացիներն իրենց հուզող հարցերն ուղղեցին ՀՅԴ ԿԿ անդամներին:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Ադրբեջանաթուրքական լոբբինգը միջոցներ չի խնայում հակահայ քարոզչություն իրականացնելու համար

Հարցազրույց ՀՅԴ Հայ Դատի Փարիզի գրասենյակի պատասխանատու Հրաչ Վարժապետյանի հետ

- Ինչպիսի՞ գործունեություն է ծավալում թուրքական եւ ադրբեջանական լոբբինգը Ֆրանսիայում:

- Նախ՝ մի բան հստակ է, որ թուրքական եւ ադրբեջանական լոբբինգը հակահայ քարոզչության իրենց աշխատանքներն իրականացնում են միասին, նույն ուղեգիծն ու մտածողությունն ունեն: Ֆրանսիայում իրենց նպատակները երկուսն են. թուրքական լոբբիստներինը Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի խափանումն է, որ առաջին անգամ հաջողվեց իրենց, ադրբեջանական լոբբիստներինը՝ Ղարաբաղյան բանակցության մեջ դիրք գրավելու հարցը՝ մասնավորապես Ֆրանսիայում, որովհետեւ Ֆրանսիան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից մեկն է: Այն, ինչ որ հայ համայնքը 100 տարվա մեջ սերունդներով ձեռք է բերել այսօր, նրանք փորձում են այդ բոլորը հավասարեցնել գրոյի: Անշուշտ, դա իրենց չի հաջողվի, սակայն նրանք շատ սրընթաց ձեւով աշխուժանում են: Կուզեի ասել հետեւյալը. այստեղ խոսքը հսկայական գումարների՝ հարյուրավոր միլիոնների, նավթադոլարների մասին է: Սրան ի հակադրում՝ մենք մնացել ենք հավատարիմ մեր ավանդական եղանակներին, եւ այս բոլորին հակառակ՝ թիավարելը դժվարանում է, որովհետեւ դաշտը բաց էր անցյալում, հիմա՝ ոչ: Իրենք հիմա սկսել են քաղաքական կյանքի վրա ներգործելու համար տնտեսական գործոնի վրա ազդել, Ֆրանսիայի հասարակական կարծիքի վրա ազդել՝ սպորտով, գիտության ակադեմիայով, արվեստով: Ֆրանսիական մեծ ընկերությունների, հաստատությունների, ծանոթ դեմքերի մոտ դրամով աշխատանք են տանում, որպեսզի համակրանք առաջացնեն Ադրբեջանի նկատմամբ, որպեսզի այդ լծակն օգտագործեն քաղաքական նպատակներով: Կան քաղաքական թրքամետ անձնավորություններ, սակայն թիվն այնքան մեծ չէ՝ ինչքան հայանպաստ դիրքորոշում ունեցողներինը:

Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը մինչեւ սահմանադրական խորհուրդ հասնելը՝ 2 տարվա ընթացքում թուրքական կողմը մոտավորապես 100 միլիոն եվրո է ներդրել այդ աշխատանքը ձախողելու համար: Խոսքը հսկայական՝ պետականորեն ծրագրված աշխատանքների մասին է: Այստեղ ծագում է հետեւյալ խնդիրը. մենք եւս պարտավոր ենք պետական մակարդակով համադրել այս ամենը եւ ոչ թե թողնել համայնքի սահմանների մեջ: Նույն ագրեսիվ քաղաքականությունը նաեւ մեր կողմից որդեգրելու հարց կա. պետք է ձեւավորել միասնական կեցվածք հայանքի, հայկական պետության եւ իշխանությունների հետ համատեղ:

- Արդյո՞ք Հայ Դատի գրասենյակները չեն համագործակցում Ֆրանսիայում գործող՝ Արցախի եւ ՀՀ ներկայացուցչությունների հետ, եւ ինչպիսի՞ն է այդ համագործակցությունը:

- Բնականաբար համագործակցում ենք, սակայն համագործակցությունը բավարար չէ, անհրաժեշտ է ազգային հստակ քաղաքականություն որդեգրել եւ համադրել աշխատանքները, որի պակասը կա, եւ՝ պատճառները, իմ կարծիքով, սուբյեկտիվ չեն, օբյեկտիվ են. ժամանակի խնդիր կա եւ այդ հարցերը հարթելու ընթացքի մեջ ենք արդեն, որպեսզի կարողանանք արտաքին քաղաքականության մեջ մեր ընթացքը եւ քաղաքական ուղեգիծը համադրել եւ նույնացնել: Եթե դա հաջողվի՝ լավագույն միջոցը կլինի ադրբեջանաթուրքական հակահայ լոբբիստական աշխատանքների դիմաց: Այս լոբբիստական աշխատանքները թուրքերը կատարում են մեր հարյուր տարվա փորձառությամբ, այն փորձառությամբ, որ մենք մի քանի սերունդ փորձել ենք: Այսօր նրանք նույն կերպ են առաջ շարժվում՝ մեկ տարբերությամբ, որ դրա հետ մեկտեղ օգտագործում են նաեւ հսկայական գումարներ, որը մեզ իհարկե պակասում է:

Ինչ հակաքայլեր է իրականացվում նրանց հակահայկական լոբբինգի դեմ:

Հակաքայլերը հիմնականում քարոզչական բնույթի են, Ֆրանսիայի հասարակության կարծիքի վրա ազդելու, ֆրանսիական քարոզչամեքենայի վրա ազդելու խնդիր է, եւ դրա համար հսկայական աշխատանք ու մարդուժ է պետք՝ այն, ինչ որ Հայ Դատի գրասենյակը եւ նրա շուրջ համախմբված տարրերը փորձում են կատարել մինչ այսօր, սակայն դա բավարար չէ: Այստեղ եւս նյութական հսկայական ներդրումների կարիք կա:

- Ի՞նչ փուլում է գտնվում հիմա Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը:

- Ամեն ինչ նորից սկսելու խնդիր կա: Նոր նախագահը խոստացել է հարցը նորից բարձրացնել: Խոստումը ուժի մեջ է, հստակ քայլեր չկան դեռ, սակայն մի բան կա. վստահ ենք եւ հետեւում ենք աշխատանքներին, որ արդարադատության նախարարության միջոցով կառավարության որոշման համար տարվում է հստակ աշխատանք: Կարծում եմ՝ այն փորձը, որ ունեցանք 2 տարի առաջ, երբ ձախողեցինք, թուրքերը փորձելու են օգտագործել՝ նույն քաղաքականությունը վարելով, լծակները օգտագործելով, ճնշումներ բանեցնելով, տնտեսական գործոնի վրա շեշտը դնելով, քաղաքական տվյալներ օգտագործելով: Սակայն նախագահը խոստացել է այս ամենը հարթել եւ օրենքն անցկացնել: Հիմա մնում է, որ նա իր խոստումը կատարի եւ մենք էլ մեր միջոցներով նաեւ մեր ճնշումը սաստկացնենք՝ որպես Ֆրանսիայի քաղաքացիներ:

- Հսկայական գումարներ է ծախսվում՝ նաեւ Խոջալուի դեպքերը՝ որպես ցեղա-սպանություն ներկայացնելու աշխարհին: Այս ուղղությամբ ի՞նչ է կատարվում Ֆրանսիայում, եւ Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը չի՞ կարող ի վնաս մեզ աշխատել:

- Կարող է գործել դրական իմաստով, որովհետեւ այդ օրենքը իրավունք կտա՝ ստի դեմ, նամանավանդ պատմության նենգափոխության դեմ դատական համակարգի միջոցով, օրենքով պաշտպանվել: Մենք ուզում ենք՝ օրենքն իրագործվի հենց այս իմաստով. պաշտպանվել կեղծիքից, ստից՝ օրենքով, որ միակ ճանապարհն է: Օրենքն է միայն, որ կարող է կասեցնել պատմության նենգափոխումը, այլապես այն կշարունակվի նենգափոխվել: Օրենքը չի կարող հակառակ ազդեցություն ունենալ, օրինակ, Խոջալուի հարցով. օրենքով կարելի է պաշտպանվել սուտ պրոպագանդայից: Մինչ այսօր Ֆրանսիան տեղ չի տալիս այդ ադրբեջանական ստին, սակայն հետզհետե ադրբեջանական քարոզչամեքենան առաջ է ընթանում, եւ այստեղ մենք միասնական կեցվածք որդեգրելու խնդիր ունենք: Այս կեղծիքը պետական կեղծիք է, պետական քաղաքականություն է, մենք էլ պարտավոր ենք պետականորեն պայքարել այս ամենի դեմ:

Պատրաստեց Արմինե ՆԱՐԻՆՅԱՆԸ

ԱՄՆ-ում տապալվեց Արցախի դեմ ուղղված հերթական բանաձեւը

Միացյալ Նահանգների Թենեսի նահանգի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը մերժել է ադրբեջանամետ ուժերի կողմից նահանգի խորհրդարան ներկայացված հակահայկական բանաձեւը, որն ուղղված էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի դեմ:

Ամերիկայի Արեւելյան շրջանի Հայ Դատի հանձնախմբի տեղեկացմամբ՝ Պալատի անդամ Ջո Թաուսսն ադրբեջանամետ իր բանաձեւի ընդունման համար չի ստացել պատգամավոր իր գործընկերներից որեւէ մեկի աջակցությունը: Թենիսի նահանգի խորհրդարանի խոսնակ Ռայն Հայնեսը հայտարարել է, որ միջնորդությունը ձախողվել է: Ամերիկահայ մի շարք գործիչներ բանաձեւի ընդունումը կանխելու համար ձեռնունայն չեն նստել. նրանք հանդիպել են տասնյակ օրենսդիրների՝ նրանց տեղեկացնելով Հայաստանի եւ Արցախի հիմնախնդիրների մասին:

Հավայիից, Հարավային Դակոտայից եւ Վայոմինգից հետո Թենեսին չորրորդ նահանգն է, որը մերժում է իրականությունը խեղաթյուրող ադրբեջանամետ բանաձեւը:

«Մենք ողջունում ենք Թենեսի նահանգի Ներկայացուցիչների պալատի Պետական կառավարման կոմիտեին, որ կարողացավ դիմակայել ադրբեջանական կառավարության ջանքերին, որոնք ուղղված են նահանգի օրենսդիրներին մոլորեցնելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բարի համբավը եւ նրա խաղաղությանը նվիրված լինելը խեղաթյուրելու համար»,- ասել է Հայ Դատի Արեւելյան շրջանի գրասենյակի խորհրդի նախագահ Ստիվ Մեսրոբյանը:

«Այսօրվա քվեարկությունն ապացույց է, որ ժողովրդավարությունը չի վաճառվում: Մեր օրենսդիրները միացել են Հավայիի, Հարավային Դակոտայի, Վայոմինգի օրենսդիրներին՝ պաշտպանելով ճշմարտությունը եւ կանգնելով ընդդեմ Ադրբեջանի բռնապետ Իլհամ Ալիեւի՝ մինչեւ մեր ափերը հասնող հակահայկական քարոզարշավի»,- նշել է Ամերիկայի Հայ Դատի Թենեսի նահանգի ներկայացուցիչ Պերճ Բարսումյանը:

Ամերիկայի Հայ Դատի Արեւելյան շրջանը նշել է նաեւ Ադրբեջանի գործունեության եւս մեկ մտահոգիչ փաստի մասին, որն ուղղված է ամերիկյան օրենսդիրներին հաղթելուն եւ, այսպես ասած, «իր վարկանիշը մաքրելուն»: Անցյալ տարի Ադրբեջանը ծախսել է հսկայական գումարներ Օբամայի վարչակազմի նախկին պաշտոնյաների՝ Դեյվիդ Պլուֆի, Ջիմ Մեսինայի, Ռոբերթ Գիբսի եւ ավելի քան 150 ԱՄՆ օրենսդիրների համար՝ Թենեսիից Բաքու տանելու եւ այնտեղ թանկարժեք խնջույքներ կազմակերպելու:

Թենեսիի լրատվամիջոցները, այդ թվում՝ Knoxnews.com կայքը, News Channel 5 հեռուստաալիքը լայնորեն անդրադարձել են դեպի Ադրբեջան այս ձրի ճանփորդություններին՝ կասկածի տակ դնելով այդ «բարեգործության» դրդապատճառները:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաբնակ Քեսաբը հարձակման է ենթարկվել զինյալների կողմից

Թուրք-սիրիական սահմանի մոտ գտնվող հայաբնակ Քեսաբ գյուղաքաղաքը եւ շրջակա հայաբնակ գյուղերը մարտի 21-ից թուրքական սահմանի ուղղությամբ հարձակման են ենթարկվել զինյալների կողմից: Հարձակման ենթարկված շրջանները տարհանվել են: Քաղաքը գրեթե ամբողջությամբ հայաթափվել է: Հայերը մեծամասամբ ապաստան են գտել Լաթաքիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող ազգային կառույցներում: Գյուղաքաղաքում բնակիչներ չեն մնացել:

«Բերիոյ նյուզ» կայքը հաղորդում է, որ հարձակումն իրականացվել է «Ջաբհա ան Նուսրա» եւ «Ջեյշ ալ Իսլամ» զինյալ խմբավորումների կողմից:

Քեսաբը եւ շրջակա հայաբնակ գյուղերն անցել են զինյալների հսկողության տակ:

Սակայն արաբական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ սիրիական բանակը հաջողություններ է գրանցել զինյալների դեմ բախումների ժամանակ եւ իր հսկողության տակ է վերցրել զինյալների գրաված մի քանի կարեւոր կետեր: Բանակը շարունակում է հարձակումներ գործել

զինյալների վրա՝ ստիպելով նրանց փախուստի դիմել:

Նախնական տվյալներով՝ կա 11 զոհ, վիրավորների թիվն առայժմ հայտնի չէ: Հաղորդվում է, որ հայերի շրջանում զոհեր չկան:

Համացանցում տեղեկություններ են տարածվել, որ Քեսաբի հայկական եկեղեցին թալանվել եւ վերածվել է գրոհայինների զինանոցի, ինչպես նաեւ տեղեկություններ կան, որ Քեսաբի հայերի տները թալանվում եւ այրվում են, իսկ ավարն ուղարկվում է Թուրքիա:

Թուրքական կայքերից մեկը տեսանյութ է հրապարակել, որտեղ հստակ երեւում է, թե ինչպես զինյալ գրոհայիններ հատում են թուրք-սիրիական սահմանը՝ առանց որեւէ խոչընդոտների:

Դեռեւս չստուգված տեղեկությունների համաձայն՝ Քեսաբի մատույցներում մղվող մարտերին մասնակցում են նաեւ ազգությամբ ադրբեջանցի գրոհայիններ:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սիրիահայության խնդիրներն այսօր

Հարցազրույց Հալեպի ազգային իշխանության ներկայացուցիչ Կարո Յուզբաշյանի հետ

- Ներկայումս ի՞նչ իրավիճակ է տիրում Սիրիայում:

- Հալեպի եւ առհասարակ Սիրիայի ժողովուրդը՝ որպես քաղաքացիներ, ապավինել են պետությանը, եւ որպես այդ երկրի քաղաքացի՝ սիրիահայերը գտնվել եւ գտնվում են երկրի իշխանությունների կողքին: Մենք՝ իբրեւ տվյալ երկրի քաղաքացի, մեր պարտականություններն ենք անում, մեր տղաները ծառայում են սիրիական բանակում: Այս տագնապալի օրերին մենք մեր կենտրոններն ենք պահում: Մեր տղաները, առհասարակ երիտասարդությունը համախմբված է կենտրոններում, ակումբներում, եկեղեցիներում եւ առաջնորդարանում: Եվ այդքանով է սահմանվում մեր ինքնապաշտանությունը: Ինչպես նաեւ գողություններն են կանխում մեր տղաները:

- Ի՞նչ հրատապ խնդիրներ ունի այսօր սիրահայությունը:

- Այսօր սիրահայությունը հիմնականում տնտեսական խնդիրներ ունի: Այն շրջանում, որտեղ հայությունն էր կենտրոնացված, դժբախտաբար հայտնվեցին վտանգավոր գոտիներում: Այն շրջանները, որոնք մոտ են սիրահայերի բնակարաններին, որտեղ նաեւ գտնվում էին հայերի արհեստանոցները, այսօր ընդդիմադիրների թիրախ են դարձել: Հայերի գործարաններն ավերվել կամ թալանվել են: Խանութները թալանված են, քանդված են եւ, հետեւաբար, աշխատանք չկա: Շատ փոքրաթիվ հայեր, ովքեր գործունեություն էին իրականացնում հայաշատ վայրերում, այսօր փորձում են աշխատել այն վայրերում, որտեղ քիչ թե շատ պետությունը կարողանում է վերահսկել, բայց նրանք շատ քիչ տոկոս են կազմում: Աշխատանք առհասարակ չկա: Ընդհանրապես հայերն արհեստավորներ են, եւ քանի որ քաղաքներում շարժ չկա, բնականաբար հաճախորդներ էլ չեն լինում: Իսկ երբ աշխատանք չկա, առաջանում է տնտեսական կաթված: Հայաշատ շրջանները հաճախակի են հրթիռակոծվում, ինչը կաթվածահար է անում կյանքը: Ուշ ժամերին մարդիկ փողոց դուրս չեն գալիս: Այն մարդիկ, ովքեր նյութապես հնարավորություն ունեին, թեկուզ ժամանակավոր՝ դուրս են եկել Սիրիայից: Տեսնելով, որ Սիրիայում անկայուն իրավիճակը ձգձգվում է, մեր հայրենակիցները շարունակում են ապրել այլ երկրներում. նրանցից մեծ մասը հաստատվել է Հայաստանում, մի մասը տեղափոխվել է Եվրոպա կամ Ամերիկա, Հոլանդիա եւ Բելգիա: Սիրահայերը Հայաստանը հիմնականում ընտրում են երկու պատճառով, նախ՝ որ հայրենիք է, եւ երկրորդ՝ մոտ է Սիրիային եւ հնարավոր կլինի կայունություն հաստատվելուց հետո շուտ վերադառնալ:

- Սիրահայերի 30 ընտանիք հաստատվել է Արցախում: Նրանք հիմնականում տեղափոխվել են Ղամիշլիի շրջանից: Արցախը գրկաբաց ընդունեց այդ ընտանիքներին: Այսօր կա՞ն ընտանիքներ, որոնք ցանկանում են տեղափոխվել Արցախ մշտական բնակություն հաստատելու համար:

- Արցախ հիմնականում տեղափոխվել են այն ընտանիքները, որոնք Սիրիայում զբաղվում էին հողագործությամբ: Ղամիշլիի հայերն ուզում են տեղափոխվել Արցախ, քանզի այն ապահով վայր է իրենց համար: Սակայն Արցախ տեղափոխվելու համար նրանք երաշխիքներ են ուզում, այսինքն՝ բնակվելու համար պայմաններ են ուզում: Եթե իմանան, որ Արցախ տեղափոխվելով իրենց բնակվելու համար կտրամադրվի տուն, կտրամադրվի հողատարածք եւ որոշ ժամանակ հարկային պատրավորություններից կազատվեն, իսկ իրենց զավակները կկարողանան դպրոց հաճախել, ապա նման պայմանների դեպքում շատ շատերը կգան Արցախ բնակություն հաստատելու համար: Սիրիայի քաղաքական աննպաստ պայմանները ստիպում են այլ երկիր տեղափոխվել, իսկ Արցախ տեղափոխվը եւ բնակություն հաստատելը կարեւոր է, քանզի այդ քայլով կխթանվի Արցախում բնակեցման ծրագիրը:

Սիրիայի խնդիրը լուծվելուն պես բավական թվով սիրահայեր կվերադառնան Սիրիա, քանզի կյանքը Սիրիայում ավելի էժան է: Սիրիահայերի համար բավականին դժվար է Հայաստանում ապրելը, նրանք շատ լավ տեսնում են, որ նույն հայաստանաբնակները աշխատանք չունենալու պատճառով մեկնում են Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի: Մենք հույս չունենք, թե Սիրիայի խնդիրը արագ լուծում կստանա: Ավելի շուտ հակված ենք, որ խնդիրը երկարաժամկետ լուծում է պահանջում:

- Սիրայում ստեղծվել էր հատուկ շտաբ, որը համակարգում եւ օգնություն էր ցուցաբերում սիրահայերին: Ներկայումս ի՞նչ է անում այդ շտաբը:

- Սիրիայի շտաբ մարմինն իր հնարավորության սահմանում տնտեսապես ընկճված ընտանիքներին իր նպաստն է բերում: Արտասահմանից, Սփյուռքի բոլոր գաղութներից օժանդակություն է գալիս Սիրիա: Նյութական օժանդակությունները հասնում են Կիլիկիո կաթողիկոսարարան: Սիրիայի հայության օժանդակության համար գործում է հաշվեհամար: Գումարները փոխանցվում են այդ հաշվեհամարին: Ճիշտ է՝ միանգամից փոխանցում կատարելը որոշակի դժվարություն է իրենից ներկայացնում, բայց այն մաս-մաս փոխանցվում է Սիրիա: Մենք շնորհակալ ենք Սփյուռքի մեջ գործող բոլոր գաղութներին, որոնք ջանք չեն խնայում սիրիահայությանն օժանդակելու համար: Մենք շնորհակալ ենք Հայաստանի Հանրապետությանը եւ Արցախի Հանրապետության կառավարությանը՝ այս տագնապալի օրերին սիրիահայերին աջակցելու եւ գրկաբաց ընդունելու համար: Սիրիահայերը օժանդակություն են ստացել նաեւ զույգ վեհափառներից: Հայաստանի եւ Արցախի կառավարությունը, քաջ գիտակցելով Սիրիայի կացությունը, մինչ այս պահն էլ զորավիգ են եւ տարատեսակ օժանդակություն են ցուցաբերում սիրիահայերին:

Պատրաստեց Անի ԱՉԱՏՅԱՆԸ

ՀՅԴ Բյուրոն դատապարտում է Քեսաբի վրա հարձակումը

Դատապարտում ենք Քեսաբի վրա Թուրքիայի սահմանի ուղղությամբ վերջին օրերին կատարված հարձակողական գործողությունները

Ամիսներ շարունակ մենք զգուշացնում էինք միջազգային հանրությանը, որ Սիրիայում կռվող օտար ծայրահեղականները մեծագույն վտանգ են ներկայացնում Սիրիայի քրիստոնյա փոքրամասնության համար: Հայաբնակ Քեսաբ ավանի եւ շրջակա գյուղերի վրա այս դաժան եւ չհրահրված հարձակումները նորագույն օրինակն են այդ բռնության, որ գործուն կերպով քաջալերվում է հարեւան Թուրքիայի կողմից:

Կոչ ենք ուղղում բոլոր պետություններին, որոնք ազդեցություն ունեն Սիրիայի հակամարտության մեջ, գործածելու իրենց հնարավոր բոլոր միջոցները՝ Քեսաբի խաղաղ բնակչության դեմ հարձակումներին վերջ տալու եւ թույլ տալու նրանց՝ ապահով եւ անվտանգ վերադառնալու իրենց տները:

Վերջին հարյուր տարում՝ այս երրորդ անգամն է, որ հայությանը պարտադրվում է հեռանալ Քեսաբից. երեք դեպքում էլ Թուրքիան կամ հարձակվողն է, կամ՝ հարձակվողներին աջակցողը:

Միաժամանակ, անհրաժեշտ է, որ միջազգային հանրությունը զսպի Թուրքիային, որպեսզի նա դադարեցնի իր հակահայ՝ այս եւ նման գործողությունները, եւ ընդհանրապես՝ Հայաստանի ու հայության դեմ իր թշնամական քաղաքականությունը:

ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի Կենտրոնական խորհուրդ

Արամ Ա կաթողիկոսը ՄԱԿ-ին առաջարկ է ներկայացրել

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը զանգահարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով պատասխանատու Ջեֆրի Ֆելթմանին եւ իր մտահոգությունը հայտնել Քեսաբում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Հեռախոսազրույցի ժամանակ Վեհափառը նշել է նաեւ, որ հանդիպումներ է ունեցել նաեւ ՄԱԿ-ի եւ Արաբական լիգայի հատուկ պատվիրակ Լահդար Բրահիմիի հետ, ինչպես նաեւ ՄԱԿ-ում Հայաստանի եւ Թուրքիայի մշտական ներկայացուցիչների հետ:

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը հատուկ նշել է նաեւ ստեղծված իրավիճակին թուրքական գործոնի ազդեցության մասին: Վեհափառն առաջարկ է ներկայացրել, որպեսզի ՄԱԿ-ը քննի Քեսաբի շրջանը ապառազմականացված տարածք հայտարարելու մասին հնարավորությունը: Ջեֆրի Ֆելթմանը Վեհափառի ներկայացրած առաջարկը կառուցողական է համարել եւ խոստացել, որ առաջիկայում այդ ուղղությամբ խորհրդակցություն կանցկացվի ՄԱԿ-ի հատուկ պատվիրակ Լահդար Բրահիմիի հետ:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախյան մշակութային շաբաթը Լիբանանում

Հարցազրույց ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանի հետ

Մարտի 8-15-ը Լիբանանում կայացել է Արցախյան մշակութային օրերի շաբաթ, որի ընթացքում Արցախի նոր սերունդը ներկայացրել է արցախյան մշակույթը: Արցախցի տաղանդաշատ երիտասարդներից եւ պատանիներից կազմված խումբը Լիբանան էր այցելել ԼՂՀ Մշակույթի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանի գլխավորությամբ:

Փոխնախարարը տեղեկացրեց, որ Լիբանանում գործող «Արցախ ֆոնտ» կազմակերպությունը, որը հիմնականում զբաղվում է Արցախի զարգացման ծրագրերով, նախաձեռնել է Լիբանանում արցախյան մշակութային օրերի անցկացման ծրագիրը, ինչին աջակցել է ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը:

- Արցախյան մշակույթը ներկայացնող նոր սերնդի խումբը, որը տարել էինք Լիբանան՝ արցախյան մշակութային շաբաթը ներկայացնելու նպատակով, կազմված էր պատանի եւ երիտասարդ տաղանդավոր կատարողներից: Խմբի մասնակիցները կատարողական տարբեր ժանրերի ներկայացուցիչներ էին՝ ժողովրդական, դասական եւ ժամանակակից երգերի կատարողներ: Լիբանանում արցախյան շաբաթի շրջանակներում անցկացվեց նաեւ արցախցի նկարիչների աշխատանքների ցուցահանդես: Լիբանանահայության շրջանակներում այդ շաբաթը հագեցած էր Արցախով: Լիբանանահայությունը բավականին կազմակերպված, ամուր գաղութ է, եւ արցախյան ազատագրական պայքարի առաջին իսկ օրերից լիբանանահայությունը միշտ թիկունք է կանգնել Արցախին: Այսօր էլ տարբեր ծրագրեր է իրականացնում Արցախում «Արցախ ֆոնտի» եւ այլ ծրագրերի միջոցով: Մեկ շաբաթվա ընթացքում մեր պատանի եւ երիտասարդ կատարողներն ունեցել են մոտ 8 համերգ: Այցի հենց առաջին օրը հանրային համերգ է կայացել Բեյրութի «Հակոբ Տեր Մելքոնյան» թատերասրահում: Այնուհետեւ այցի հաջորդ օրը տեղի է ունեցել ե՛ւ հանրային համերգ, ե՛ւ ցուցահանդես Այնճարում: Ի դեպ, Այնճարը Մուսալեռցիների բնակավայրն է: Այն ինքնատիպ մի վայր է, որտեղ բնակչության գրեթե 100 տոկոսը հայեր են, եւ բավականին լավ ընդունելության են արժանացել արցախցի երիտասարդների եւ պատանիների համերգները: Երկու աշակերտական համերգ է կայացել նաեւ «Տեր Մելքոնյան» թատերասրահում: Աշակերտների համար կայացած համերգների հանդիսատեսը եղել է Բեյրութի տարբեր հայկական դպրոցներից: Երկու աշակերտական համերգներ կայացել են Համազգայինի ճեմարանում եւ Եղիշե Մանուկյան ազգային վարժարանում: Այդ համերգներին, թեկուզ եւ հանդիսատեսները աշակերտներ էին, բայց բավականին մեծ հետաքրքրությամբ էին ունկնդրում արցախցի կատարողներին: Մենք հաճելիորեն զարմացանք, քանզի այդ աշակերտների մոտ 80 տոկոսը հաճախում է մշակութային տարբեր խմբակներ, ինչն իսկապես ուրախալի էր, քանի որ այդպիսի պայմաններում ոչ միայն պահում են իրենց լեզուն եւ կրոնը, այլ նաեւ պահպանում են իրենց մշակույթը, ինչը շատ կարեւոր է:

Իսկ մարտի 14-ին՝ գալա համերգի ժամանակ, ներկա էին Լիբանանի մտավորականության ներկայացուցիչներ եւ Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Քոչարյանը: Ի դեպ, Լիբանանում հավանեցին նաեւ մեր նկարիչների աշխատանքները, որոնք բազմաժանր էին:

- Լիբանան կատարած այցի ժամանակ հանդիպում եք ունեցել Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի հետ: Ինչպե՞ս է անցել ընդունելությունը եւ ի՞նչ կպատմեք այդ հանդիպումից:

- Մենք հանդիպում ունեցանք Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. Կաթողիկոսի հետ: Արցախցի տաղանդաշատ երեխաները փոքրիկ համերգ ունեցան հենց վեհարանում: Վեհափառը հանդիպման ժամանակ կարեւորեց նման այցելությունները եւ բարձր գնահատելով արցախցի պատանիների շնորհաշատ տաղանդը՝ առանձնահատուկ շեշտեց Արցախին կապված լինելու հրամայականի կարեւորության մասին: Նաեւ նշեց, որ Արցախի հզորացումն ու ծաղկումը համահայկական առաջնահերթություն է հանդիսանում, եւ՝ որ յուրաքանչյուր հայ պարտավոր է իր մասնակցությունը բերել այդ նվիրական գործին:

- Լիբանանում նմանատիպ միջոցառում երբեւէ անցկացվե՞լ է:

- 2011 թվականին «Արցախ ֆոնտի» նախաձեռնությամբ նմանատիպ միջոցառում անցկացվել է Լիբանանում: Եվ սա հերթական նախաձեռնությունն էր, որն էլ ընդունվեց եւ աջակցություն ստացավ ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից:

Լիբանանահայության եւ Արցախի մշակութային կապերի հիմքը դրվել է նաեւ Զաքար Քեշիշյանի շնորհիվ, ով Շուշիում ստեղծեց Վարանդա երգչախումբը, որից կարճ ժամանակ անց Բեյրութում ստեղծեց Կարկաչ երգչախումբը: Համագործակցության արդյունքում՝ Վարանդան այցելել է Բեյրութ, իսկ Կարկաչը՝ Արցախ: Այս մշակութային կապերը նոր չեն, եւ շարունակական բնույթ ունեն, քանզի եւ Վարանդա-Կարկաչ երգչախմբերի եւ «Արցախ Ֆոնտի» ու ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության միջեւ հաստատված կապերի շնորհիվ, ամենայն հավանականությամբ, այս ծրագիրը շարունակական բնույթ կկրի:

- Ի՞նչ տպավորություններով եք վերադարձել Լիբանանից:

- Լիբանանահայությունը հիացած էր մեր երիտասարդ տաղանդների կատարումներով: Մենք Լիբանանից վերադարձել ենք չափազանց տպավորված: Լիբանանահայ գաղութը բավականին ամուր, միասնական գաղութ է, եւ լիբանանահայ գաղութն ապրում է Արցախով: Եվ անկախ այն բանից՝ հայ առաքելական եկեղեցու հետեւորդ են, թե հայ կաթոլիկ են կամ հայ ավետարանչական եկեղեցու հետեւորդ, նրանց բոլորին միավորել է մի կարեւոր գաղափար. դա Արցախի վերակառուցումն է, Արցախին տարբեր ծրագրերով օգնելը:

- Լիբանան կատարած այցի ընթացքում եղե՞լ են արդյոք հանդիպումներ, որոնք կցանկանայիք առանձնացնել:

- Հանդիպում է տեղի ունեցել Համազգայինի Կենտրոնական վարչության հետ, ինչպես նաեւ այցելություններ են եղել Համազգայինի մշակութային կենտրոններ, մասնավորապես՝ Լեւոն Շանթի կենտրոն:

Հանդիպում է եղել ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի հետ:

«Ազդակ» թերթի նախաձեռնությամբ «Փյունիկ» սրահում հանդիպում է կայացել Լիբանանի մտավորականության հետ: Եւ մեր հիմնական թեման Արցախյան մշակութային կյանքն է եղել: Հանդիպում է կայացել նաեւ Հայկազյան համալսարանում, որտեղ դասախոսություն եմ կարդացել ուսանողների համար Արցախյան թեմայով: Ի դեպ, Լիբանանում հայկական այն եզակի գաղութն է, որտեղ առկա են կրթական բոլոր փուլերը՝ սկսած նախակրթարանից մինչեւ համալսարանական կրթություն, եւ հենց Լիբանանում է գործում Հայկազյան համալսարանը, որտեղ կրթություն են ստանում ոչ միայն հայ երիտասարդներ, այլ նաեւ քրիստոնյա եւ մահմեդական արաբներ:

Հարցազրույցը՝ Անի ԱՂԱՏՅԱՆԻ

Քեսաբցիների կոչը համայն հայությանը

Մարտի 21-ին 2014, Մայրերի օրը, մեր գեղեցիկ քաղաքը դաժան հարձակման ենթարկվեց Ալ-Քաիդայի ծայրահեղականների եւ Ալ Nusra ճակատի կողմից, որոնք իրենց օրհնությունը եւ լիակատար ռազմական եւ թիկունքային աջակցությունը ստացել էին Թուրքիայի կառավարության կողմից:

Մինչ լույսը բացվելը, մենք արթնացանք սարսափի մեջ՝ հրթիռների տարափից, որոնք ընկնում էին քաղաքի վրա: Հազարավոր ծայրահեղականներ հատել էին մեր քաղաքի սահմանները: Հրթիռներ էին արձակվում Թուրքիայից ոչնչացնելու համար գեղեցիկ Քեսաբը եւ նշելու Հայոց ցեղասպանության 100-ամյակը: Քեսաբի հերոսները պաշտպանում էին քաղաքը իրենց պարզ որսորդական հրացաններով, մինչեւ որ ավելի շատ ուժեր միացան նրանց Սիրիայի կառավարության կողմից, որոնք եկել էին ետ մղելու այդ սարսափելի հարձակումը մեր քաղաքի վրա: Եթե քեսաբցիները չտեղեկացվեին այդ հերոսների կողմից, որ պետք է լքեն իրենց տները աշխարհը պետք է լուռ ականատեսը դառնար հերթական ցեղասպանության, իսկ ԶԼՄ-ները կտարածեին կեղծիքի եւս մեկ տարբերակ: Քեսաբը միշտ եղել է հազարավոր հայերի տունը՝ դարեր շարունակ: Քեսաբը առաջին անգամ հոգեվարքի մեջ հայտնվեց 1909թ. ողբերգության ժամանակ, երբ հազարավոր թուրքերի ամբոխը հարձակվեց նրա վրա, որի արդյունքում այն թալանվեց, տները այրվեցին եւ 161 հայ սպանվեց դաժան հարձակման հետեւանքով: 1915-ի Հայոց ցեղասպանության ժամանակ թուրքական զորքերը մտան Քեսաբ եւ սկսեցին արտաքսել հայերին եւ սպանել գրեթե 5000 քեսաբցի հայերի: Թուրքերի ձեռքով իրականացված Հայոց ցեղասպանությունը խլեց մեկ ու կես միլիոն հայերի կյանքը: Ավելի շատ հայեր են զոհվում եւ կարող են զոհվել Սիրիայում, եթե ոչինչ չարվի: Արաբները Սիրիայում պատսպարել են մեզ, ապա հոգ տարել մեր մասին, օգնել մեզ ոտքի կանգնել եւ գոյատեւել՝ մահվան եւ ոչնչացման սարսափելի հիշողությունները հաղթահարելով, եւ մենք պետք է հավերժ երախտապարտ լինենք նրանց: Այդ ժամանակից ի վեր մենք ապրել ենք հաշտ ու խաղաղ այլադավների հետ, ինչպես մի հսկայական ընտանիք, մի տուն, որը կոչվում է Սիրիա:

Այսօր մենք նույնպես օգնության կարիք ունենք, քանի որ, ցավոք, թուրքական կառավարությունը համարձակություն ունեցավ հարձակվել հայերի վրա՝ եւս մեկ անգամ անտեսելով հայ դատը: Այս գործողությամբ Թուրքիան հրաժարվում է կրկին անգամ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որը թուրքերի ձեռքով է կատարվել եւ աջակցում է, որ ավելի շատ հայեր սպանվեն Սիրիայում: Մենք թուրք ժողովրդի դեմ ոչինչ չունենք: Մենք ապրել ենք որպես հարեւաններ նրանց հետ եւ ցանկանում ենք շարունակել ապրել որպես հարեւաններ: Դա թուրքական կառավարությունն է, որ աջակցում եւ նպաստում է քեսաբցիների սպանություններին ահաբեկիչների կողմից, որոնց դեմ է ուղղված մեր կոչը: Մենք պարզապես ցանկանում ենք ետ ստանալ մեր քաղաքը կամ այն, ինչ մնացել է դրանից: Քանի որ կան շատ տեսանյութեր YouTube-ում, որ ցույց են տալիս, թե ինչպես են այդ ծայրահեղականները ոչնչացնում եւ այրում մեր գեղեցիկ քաղաքը: Ողջ Սիրիան գիտի, որ որտեղ էլ այդ ծայրահեղականները հայտնվում են, այնտեղ սփռում են միայն մահ եւ կործանում իրենց ետեւից:

Մեր տները վերցվել են մեզնից եւ դարեր շարունակ մեր ժառանգությունը ոչնչացվել է: Սա կոչ է՝ ուղղված բոլոր հայերին: Սա կոչ է՝ ուղղված ողջ մարդկությանը: Աշխարհը պետք է լսի ճշմարտությունը: Էրդողանը եւ նրա կառավարությունը պատերազմի հանցագործներ են: Մենք ձեր օգնության կարիքն ունենք: Մենք կարիք ունենք, որ դուք քայլեր ձեռնարկեք: Մեր կյանքը կախված է նրանից, թե դուք ինչ կանեք, որ մենք չմեռնենք: Մեզ բռնի հանել են մեր տներից: Մենք ոչինչ չունենք, բացի մեր հագուստը, որը կրում ենք: Եթե մենք մնայինք, որ հավաքեինք առաջին անհրաժեշտության իրերը, անպայման արդեն մահացած կլինեինք: Մեզանից շատերը չեն կարողացել փախչելով նույնիսկ անձնագիր եւ փաստաթղթեր վերցնել: Խնդրում ենք, խնդրեք ձեր կառավարությունների եւ ՄԱԿ-ի կամ որեւէ այլ մարմնի միջամտությունը, որոնք, կարծում եք՝ մեզ կարող են օգնել: Այն ամենը, ինչ մենք ուզում ենք, այն է, որ ուզում ենք ապրել: Եթե Դուք անտեսեք սա, մենք բոլորս սարսափելի մահով կսպանվենք ահաբեկիչների կողմից՝ մորթվելով սառնարյուն կերպով, այնպես, ինչպես շատ հայեր Հալեպում, Yacoubiyeh, Ghenemiyeh եւ ամբողջ Սիրիայի տարածքում:

Նրանք, ում դուք անվանում եք ապստամբներ, ծայրահեղականներ են, որոնք եկել են Սիրիա ջիհադի, որոնք բաղկացած են բազմաթիվ ազգություններից, աֆղանցիները, չեչենները, Սաուդյան Արաբիայից եւ այլն: Քեսաբցիները եւ ողջ Սիրիան տեսավ նրանց, թե ինչպես նրանք հարձակվեցին եւ սպանեցին ժողովրդին: Լրատվամիջոցները չեն կարող թաքցնել ճշմարտությունն ընդմիշտ: Դուք չեք կարող կառավարել մարդկանց կյանքն ընդմիշտ: Նրանք, ովքեր կոչվում են ապստամբներ, թիրախավորվում եւ հարձակվում են քաղաքացիների վրա: Խնդրում ենք արթնանալ:

Չե՞ք կարծում, որ բավարար անմեղ արյուն է թափվել: Չե՞ք կարծում, որ բավարար կործանում եւ ոչնչացում է տեղի ունեցել: Մենք բոլորս ապրում էինք խաղաղ եւ երջանիկ՝ ընդամենը երեք տարի առաջ: Սա ոչ թե հեղափոխություն է, սա պատերազմ է: Իսկ Սիրիայի բանակը այժմ Քեսաբում պայքարում է, որպեսզի երաշխավորի հայերի անվտանգ վերադարձը դեպի իրենց տներ:

«ԱՊԱՌԱԺ»

ՀՅԴ Միջմարմնական խորհրդաժողովի մասնակից անդամները հանդիպեցին երիտասարդների հետ

Արցախում կայացած ՀՅԴ Միջմարմնական խորհրդաժողովի մասնակից անդամներից Մուրադ Թոփալյանը (ԱՄՆ), Բենյամին Պչաքճյանը (Լիբանան), Եղիսաբեթ Չուլջյանը (ԱՄՆ), Կարո Մատենլյանը (ԱՄՆ) հանդիպեցին ՀՅԴ Արցախի երիտասարդական միության անդամներին:

Ընկերները ներկայացրին արտերկրում Հայ Դատի գործունեությունը, Արցախի հիմնախնդրի հետ կապված իրենց աշխատանքների մանրամասնություններ:

Եղիսաբեթ Չուլջյանը, ով երկար տարիներ աշխատում է Ամերիկայի Հայ Դատի գրասենյակում, երիտասարդներին ներկայացրեց ադրբեջանական եւ թուրքական՝ օրըստօրե ակտիվացող լոբբինգի դեմ Հայ Դատի գրասենյակի կողմից իրականացվող հակաքայլերի մասին: Ի հակառակ նրան, որ Ադրբեջանն ու Թուրքիան վիթխարի ֆինանսական միջոցներ են ներդնում հակահայկական քարոզչություն իրականացնելու, պատմությունը խեղաթյուրելու համար, առ այսօր Հայ Դատի գրասենյակներին հաջողվել է իր գրագետ ու համակարգված գործունեության շնորհիվ հակազդել ադրբեջանաթուրքական լոբբինգին:

«Մեզ ուժ ու եռանդ է տալիս այն հանգամանքը, որ հազարավոր հայ մարդիկ մեր կողքին են եւ կիսում են մեր գաղափարներն ու մտահոգությունները: Դրա համար՝ նույնիսկ ամենադժվարին պահին, որ թվում է ելք չկա այլեւս, հետ քայլի իրավունք չենք վերապահում մեզ եւ պայքարում ենք մինչեւ վերջ»,- ասաց Եղիսաբեթ Չուլջյանը:

Ելույթներից հետո ծավալվեց երկխոսություն: Երիտասարդներն իրենց մտահոգող հարցերն ուղղեցին ընկերներին, մասնավորապես՝ հայրենադարձության, Հայ Դատի աշխատանքներին արցախցի երիտասարդ մասնագետների ներգրավվածության, երկու հայկական հանրապետությունների ներքին խնդիրների մասին:

Մուրադ Թոփալյանը, ով երկար տարիներ ակտիվորեն ներգրավված էր Հայ Դատի տարբեր աշխատանքներում, վստահություն հայտնեց, որ Հայ Դատի վերջնական լուծումը, Արցախյան հարցի կարգավորումը երիտասարդ սերնդի ձեռքերում է:

«Մեր երազը՝ Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանը, բարձր տեղ է, սակայն անհասանելի չէ: Դուք եք մեր նորագույն պատմության կերտողը, մեր հեղափոխությունը, քանզի միայն զենքով չէ հեղափոխությունը, այլեւ այն ապրելու ձեւ է»,- դիմեց նա երիտասարդներին:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

ՀՅԴ ԱԵՄ-ի նախաձեռնությունն ավագ դպրոցներում ռազմահայրենասիրական ոգու բարձրացման համար

ՀՅԴ Արցախի երիտասարդական միության երիտասարդները եւ հրավիրված 30 աշակերտ՝ Ստեփանակերտի թիվ 8 եւ թիվ 11 ավագ դպրոցներից, այցելեցին հրաձգարան:

Միջոցառումը նպատակաուղղված էր բանակ-հասարակություն կապի ամրապնդմանը, ինչպես նաեւ երիտասարդների մեջ ազգային ոգու եւ մարտական պատրաստականության բարձրացմանը:

Փոխգնդապետ Արա Քամալյանն իր խոսքում կարեւորեց նման միջոցառումների անհրաժեշտությունը:

Ստեփանակերտի թիվ 8 ավագ դպրոցի զինղեկ Ս. Բախշիյանը շնորհակալություն հայտնեց ՀՅԴ ԱԵՄ-ին նման նախաձեռնության համար, նշելով նաեւ, որ նման միջոցառումները կարեւոր են աշակերտների կրակային պատրաստվածության վիճակը բարձրացնելու համար, եւ ցանկալի է պարբերաբար կազմակերպել նման միջոցառումներ, որպեսզի հնարավորինս շատ աշակերտներ ընդգրկվեն:

Ստեփանակերտի թիվ 11 ավագ դպրոցի աշակերտ Հայկ Հայրապետյանը ցուցաբերեց լավագույն ցուցանիշները՝ խոցելով բոլոր թիրախները, չունենալով ոչ մի վրիպում: Ոգեւորված իր ցուցանիշներից՝ իր խոսքում նա նշեց, որ պատրաստ է ՀՅԴ ԱԵՄ-ի նմանատիպ բոլոր միջոցառումներին ցուցաբերել իր ակտիվ մասնակցությունը:

Ստեփանակերտի թիվ 11 ավագ դպրոցի զինղեկ Արմեն Դոլուխանյանը նշեց. «Նմանատիպ միջոցառումները բարձրացնում են աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, սեր առաջացնում դեպի ազգային բանակը: Ցանկալի է, որ այն ունենա շարունակական բնույթ»:

ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը շնորհակալություն է հայտնում թիվ N զորամասի հրամանատար Ջ. Հայրապետյանին հրաձգության կազմակերպմանն օժանդակելու համար:

ՀՅԴ ԱԵՄ

Թատրոնի միջազգային օրն Արցախում նշվեց առաջնախաղով

Մարտի 27-ին նշվեց Թատրոնի միջազգային օրը (World Theatre Day): Այն միջազգային տոնացույց է մտել 1961-ից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Թատրոնի միջազգային ինստիտուտի (International Theatre Institute, ITI) IX կոնգրեսի կողմից եւ ամեն տարի նշվում է մարտի 27-ին՝ ի նշանավորումն թատերական արվեստի մեծ հեղինակության ու դերի: Առաջին անգամ տոնը նշվել է միայն Ֆրանսիայում, ապա տարածվել ամբողջ աշխարհում:

Գրեթե երկու տասնամյակ է, ինչ հայաստանյան թատերական գործիչների կողմից այդ օրը նշվում է «Արտավազդ» ամենամյա թատերական մրցանակաբաշխությամբ, եւ, 2008-ից սկսված, այն նշվում է ավելի հանդիսավոր պայմաններում: Արցախը անմասն չի մնում, եւ գրեթե 20 տարի է, ինչ Արցախում եւս նշվում է Թատրոնի միջազգային օրը: Այս տարի Արցախում տոնը նշվեց առանձնահատուկ կերպով: Մարտի 27-ին Մշակույթի եւ երիտասարդության պալատի դահլիճում կայացավ իտալացի ռեժիսոր-դրամատուրգ Էդուարդո Դե Ֆիլիպոյի «Ծննդյան տոները Սինյոր Կուպյելոյի տանը» ռոմանտիկ կատակերգության բեմադրության առաջնախաղը: Ներկայացման բեմադրող ռեժիսորը Երեւանի Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեժիսուրայի բաժնի շրջանավարտ Ռուզաննա Խաչատրյանն է:

Ռուզաննայի խոսքերով՝ պատահական չի եղել այդ պիեսի ընտրությունը. «Նախ շատ եմ սիրում Էդվարդո Դե Ֆիլիպոյին եւ, առհասարակ, նրա ստեղծագործությունները: Դրամատուրգիայի այս տեսակը ես մի փոքր շահավետ եմ համարում բեմադրության առումով, մանավանդ ուսանողի համար: Բամադրական առումով այդ գործը բավականին շահավետ է. դա ամենագլխավոր պատճառներից մեկն էր, ինչի համար ընտրեցի հենց այդ գործը: Չնայած այդ գործում ներկայացված է մարդկային խորը հոգեբանություն, որը պետք է հասցնես հանդիսատեսին: Այսինքն՝ բեմադրիչը պետք է հասած լինի այն մակարդակին, որ կարողանա այդ ամենը ներկայացնել հանդիսատեսին, սակայն, կարծում եմ, կարողացանք մեր ասելիքը տեղ հասցնել: Չնայած ժամանակի սղությանը՝ կարողացանք ներկայացումը հասցնել լուրջ մակարդակի, այսինքն՝ դերասանների համախմբվածության, ասելիքի ճիշտ տեղավորման եւ ասելիքը հանդիսատեսին ճիշտ հասցնելու հարցում, կարծում եմ, հասանք արդյունքի»:

Ռուզաննան գոհ էր դերասանական կազմից եւ հանդիսատեսի արձագանքից. «Առհասարակ շատ կարեւոր է, թե ինչպես է ներկայացման ընթացքում ստեղծվում բեմ-

հանդիսատես կապը: Եվ հանդիսատեսի արձագանքից արդեն պարզ է դառնում, թե ներկայացման ասելիքն ինչքանով է ճիշտ տեղ հասել: Այս ներկայացման գերխնդիրը մարդկային բարությունն է, մի քիչ հեքիաթով ապրելն է, իսկ այսօր մեր իրականության մեջ շատ քիչ են այդպիսի մարդիկ, ովքեր ունեն շատ մեծ ներաշխարհ, որով կարողանում են նաեւ արտաքնապես արտահայտվել եւ ուրիշներին ստիպել, որպեսզի ապրեն այդ կյանքով: Իմ հերոսն այդ տեսակի մարդ էր: Նա կարողացավ իր ընտանիքին եւ շրջապատի մարդկանց նույնպես տեսանելի դարձնել այդ անտեսանելի ու գեղեցիկ աշխարհը, որը մեր հոգում է»:

Բեմադրության ժամանակ երիտասարդ բեմադրիչը բնականաբար հանդիպել է դժվարությունների. «Բեմադրության ժամանակ հանդիպել եմ բավականին խնդիրների՝ եւ ստեղծագործական, եւ ֆինանսական առումով: Բավականին խնդիրներ կային՝ ներկայացումը վերջնակետին հասցնելու առումով, սակայն մենք կարողացանք լուծումներ գտնել: Սակայն ամենամեծ խնդիրը, որն այդպես էլ չկարողացանք լուծել, դա թատերական բեմն էր: Տեխնիկական եւ ստեղծագործական խնդիրներ նույնպես կային, բայց դրանք կարողացանք հաղթահարել»:

Ներկայացման դերասանական կազմը Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի երիտասարդ սերնդի դերասաններն են, բացառությամբ՝ գլխավոր դերակատար Մարտին Ալոյանի:

Չնայած իտալացի ռեժիսոր-դրամատուրգ Էդուարդո Դե Ֆիլիպոյի «Ծննդյան տոները Սինյոր Կուպյելոյի տանը» ռոմանտիկ կատակերգությունը Ռուզաննա Խաչատրյանի դիպլոմային աշխատանքն էր, սակայն այն մնալու է թատրոնի ռեպերտուարում: Իսկ երիտասարդ ռեժիսոր Ռուզաննա Խաչատրյանը, ի ուրախություն թատերասերների, նպատակադրվել է առաջիկայում նույնպես նոր բեմադրություններ անել Արցախում:

Հայաստանի Թատերական գործիչների միության ղեկավար Հակոբ Ղազանչյանը, ով դիպլոմային աշխատանքն ընդունող հանձնաժողովի նախագահն էր եւ հատուկ Արցախ էր եկել ներկայացումը դիտելու համար, ոգեւորված եւ հաճելիորեն զարմացած էր նման լուծումներով բեմադրության համար: Ի դեպ, Հակոբ Ղազանչյանը մենակ չէր եկել: Նրա հետ ներկայացումը դիտելու համար Արցախ էին եկել Համազգային թատրոնի գեղարվեստական ղեկավար Հրաչյա Գասպարյանը եւ Երեւանի Մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ժիրայր Դադասյանը:

«Մենք Արցախում բավականին ուրախալի լուրեր ենք լսել,- նշեց Հ. Ղազանչյանը,- մեզ տեղեկացրեցին, որ Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի վերականգման աշխատանքներն ընթացքի մեջ են, եւ կրկնակի ուրախալի էր, որ նախագծային աշխատանքներն իրականացվել է ճարտարապետ Արթուր Մեսչյանի կողմից: Հույս ունենք, որ մոտ ժամանակներս կունենանք վերանորոգված թատրոն, եւ թատրոնը կշարունակի իր բնականոն աշխատանքը»:

Հ. Ղազանչյանը իր տեսակետն արտահայտեց նաեւ բեմադրության մասին. «Իրականում ռեժիսուրան շատ բարդ գործ է, եւ առաջին քայլերն անող մարդու համար՝ համախմբել մի ամբողջ կոլեկտիվ եւ համոզել բոլորին իր տեսանկյան մեջ, իր նպատակների համար, շատ բարդ գործ է: Եվ մի փոքր անսպասելի էր, որ Ռուզաննան կարողացել էր հաղթահարել այդ պրոցեսը: Համոզված եմ, որ տարիների ընթացքում Ռուզաննան կկարողանա ավելի կատարելագործվել եւ նոր բեմադրություններ անել»:

Ա. ԱՇԱՏՅԱՆ

Անխռով հոգեվիճակ

Յուրաքանչյուր մարդ ձգտում է ունենալ անխռով հոգեվիճակ: Դա նրա բնական՝ աստվածատուր վիճակն է: Ցանկացած շեղում այդ վիճակից մարդու մոտ առաջացնում է ափսոսանքի, անբավարարվածության կամ տառապանքի զգացում: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս պահպանել անխռով հոգեվիճակը: Տվյալ հարցին պատասխանելու համար, պատկերավոր ասած, պետք է լուծել բազմաթիվ անհայտներով մի հավասարում: Հավասարումից առանձնացնենք երկու անհայտ եւ փորձենք տալ մասնակի լուծումներ:

Առաջին.- Հայության մի ստվար զանգվածի մոտ վատ սովորություն է արմատավորված, ասում են. «Եթե վատը չմտածենք, լավը չի գալու»: Պատճառաբանությունը հետեւյալն է՝ «վատը» մտածելով, մարդը զգուշանում է, իր համար նախընտրելի, ապահով վիճակ է ստեղծում: Բայց իրականում՝ հակառակն է կատարվում:

Գիտականորեն ապացուցված է, որ մարդու խոսքը եւ միտքը նյութական է: Եթե մարդը «վատն» է մտածում, պատկերավոր ասած, նրա ուղեղի համապատասխան մասում առաջանում է որոշակի քանակությամբ նյութ՝ բացասական էներգիայի տեսքով: Նման նյութը կուտակվելով, հասնելով որոշակի քանակության, մարդու մոտ առաջացնում է վատ տրամադրություն, ի վերջո՝ դեպրեսիա:

Կոնկրետ օրինակի վրա բացատրենք, թե ինչպես է տեղի ունենում այդ երեւույթը: Ենթադրենք մարդուն ինչ-որ ժամի զանգահարում են (ներկայում դա ավելի հաճախ է տեղի ունենում, նկատի ունենալով բջջային հեռախոսների առկայությունը եւ առատությունը): Եթե մարդը «վատը» մտածելու կողմնակից է, պարզ է ինչպիսի ապրումներ է ունենում մինչեւ զանգահարողի ինքնությունը պարզելը եւ առաջին նախադասությունը լսելը: Այդ փոքրիկ ժամանակահատվածն էլ բավական է, որ նրա մոտ ահռելի քանակությամբ բացասական էներգիա կուտակվի: Դրա չեզոքացման համար, եթե ոչ ավելի, գոնե նույնչափ դրական էներգիա է հարկավոր «ստեղծել» եւ օգտագործել: Բայց դա էլ վերջնական լուծումը չէ, քանի որ չեզոքացման դեպքում էլ հետքը մնում է: Կոպիտ ասած՝ պատերազմի դաշտում հակառակորդին վերացնելուց հետո հակառակորդը չի անհետանում:

Ուստի, «վատը» մտածողներին խորհուրդ ենք տալիս՝ մտածել նաեւ գլխուղեղում կուտակվող «զոհերի» եւ դրանց մաքրման մասին:

Անդրադառնանք «վատը մտածել» բառակապակցությանը: Մտածել բառի հոմանիշն է խորհելը: Հոգեւոր հայրերից Ներսես Շնորհալին մեզ պատգամել է, որ ամեն ժամ խորհենք, խոսենք եւ գործենք բարին: Միեւնույն ժամանակ՝ բարին գործելու նախապայման է բարին խորհելը: Հետեւապես՝ վերը բերված օրինակում, երբ լսում ենք հեռախոսազանգի ձայնը, պետք է «լավը» մտածենք (խորհենք) եւ հանգստորեն, խաղաղությամբ վերցնենք հեռախոսը:

Երկրորդ.- Մարդն, օրվա ընթացքում, կամա-ակամա, մտաբերում է այնպիսի մարդկանց եւ երեւույթներ, ինչը նրա մոտ առաջացնում է բացասական զգացմունքներ: Նման դեպքերում կարելի է օգտագործել ինքնահանգստացման զուգորդման-ասոցատիվ մեթոդը: Դրա էությունը կայանում է հետեւյալում: Ենթադրենք դուք չեք սիրում (կամ պարզապես ատում եք) մի մարդու, ով հայտնվում է ձեր մտապատկերում: Նման պարագայում դուք պետք է մտքում պատկերացնեք ձեզ համար սիրելի մի ծաղիկ, փոքրիկ «փամփլիկ» շնիկ, նապաստակ կամ ինչ-որ մի իր եւ այն զուգորդեք տվյալ անձին: Մի քանի անգամ կրկնելով զուգորդումը, դուք հետագայում այդ մարդուն մտաբերելիս ասոցացվելու է տվյալ առարկան կամ իրը: Պարտադիր պայման է ասոցացումը կատարել ժպիտով, ոչ թե՝ բարկությամբ:

Անխռով հոգեվիճակի հասնելու համար տարբեր ձեւեր եւ եղանակներ կան, բայց ամենաարդյունավետը եւ հուսալին՝ աղոթքն է:

Հայ Եկեղեցու հոգեւոր հայրերը ստեղծել են բյուր աղոթքներ՝ «Առավոտյան» եւ «Երեկոյան», «Ճաշակելուց առաջ» եւ «Ճաշակելուց հետո», «Ճանապարհից առաջ» եւ «Տունդարձի»..., «Ազգի համար» եւ «Թշնամիների»: Այո՛, նաեւ թշնամիների համար է աղոթում հայ քրիստոնյան. «Տե՛ր, թշնամիներիս համար աղոթում եմ Քեզ, ամենաջերմ աղոթքս է այս: Ո՛չ, Տեր, չեմ աղոթում, որ պաշտպանես չարը բարիի դեմ, որովհետեւ այդ կլինի սրբապղծություն: Բայց, Տե՛ր, աղոթում եմ թշնամիներիս համար, որովհետեւ նրանք էլ ճամբաներից մեկն են, որ առաջնորդում են մեզ դեպի Քեզ՝ ըստ նախախնամությանդ անքննելի ծրագրերի»:

Ինչպես վերեւում նշեցինք՝ զուգորդման-ասոցատիվ մեթոդի ժամանակ օբյեկտը հիմնականում ծանոթ մարդն է, որին մտաբերելու կամ հանդիպելու դեպքում մեծ ճիգերի գնով կարողանում ենք պահպանել հոգեւոր անխռով վիճակ: Իսկ եթե այդ մարդու համար աղոթենք՝ արդյունքը ավելի շոշափելի կլինի:

Կարեւոր է, որ աղոթելու ժամանակ նշվի այդ մարդու անունը եւ աղոթքը լինի անկեղծ:

Եղե՛ք անխռով:

Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆ

Ցուցահանդես-մրցույթ Արցախում

«Մայրություն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ, ԼՂՀ պաշտպանության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի, աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությունների եւ մի շարք այլ գերատեսչությունների հովանավորությամբ Մշակույթի եւ երիտասարդության պալատում տեղի ունեցավ «Իմ հոգում արեւ է ու գարուն» խորագրով հանրապետական ցուցահանդես-մրցույթ:

Ցուցահանդես-մրցույթին մասնակցություն են ունեցել ազատամարտիկներ, Արցախյան ազատամարտի հաշմանդամներ, զինծառայողներ՝ ԼՂՀ բոլոր շրջաններից, թվով՝ 94 մարդ:

Ցուցահանդես-մրցույթին ներկայացված էին կավե աշխատանքներ, գեղանկարչական կտավներ, քանդակներ եւ այլն:

Շուշիի Գյուրջյան կիրառական արվեստի ինստիտուտի ռեկտոր Յուրի Հովհաննիսյանի խոսքերով՝ ցուցահանդեսի նպատակը գեղեցիկի քարոզումն է եւ Արցախի հոգեւոր ու մշակութային արժեքների պահպանումն ու զարգացումը:

Ժյուրիի կողմից մրցութային տարբեր անվանակարգերում լավագույնը ճանաչված ստեղծագործությունների հեղինակները միջոցառման աջակիցների կողմից ստացան հուշամեդալներ, պատվոգրեր, դրամական պարգեւներ, արժեքավոր նվերներ:

Վերջում գեղարվեստական ծրագրով հանդես եկան ՊԲ «Ասպետ» համույթը, ասմունքողներ, պարային խմբեր:

Ա. ՆԱՐԻՆՅԱՆ

Ցավակցական

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեն Արցախի կառույցի անունից իր ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում Կենտրոնական կոմիտեի անդամ **Արմեն Սարգսյանին եւ նրա ընտանիքին՝ քրոջ՝ Զոյա Հովհաննիսյանի** վաղաժամ մահվան կապակցությամբ:

Ցավակցական

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեն Արցախի կառույցի անունից իր ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում ՀՅԴ Ստեփանակերտի «Ա. Մկրտչյան» կոմիտեության անդամ **Նարինե Հովհաննիսյանին՝ մոր՝ Զոյա Հովհաննիսյանի** վաղաժամ մահվան կապակցությամբ:

Ցավակցական

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեն Արցախի կառույցի անունից իր ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում ՀՅԴ Ասկերանի «Բերդ» կոմիտեության անդամ **Սուրեն Թովմասյանին եւ նրա ընտանիքին՝ մոր՝ Սիրուն Թովմասյանի** մահվան կապակցությամբ:

Ցավակցական

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեն Արցախի կառույցի անունից իր ցավակցությունն ու զորակցությունն է հայտնում ՀՅԴ Մարտունու «Մ. Մոսիյան» կոմիտեության անդամ **Մխիթար Շինդյանին եւ նրա ընտանիքին՝ հոր՝ Ավանես Շինդյանի** մահվան կապակցությամբ:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Սեւակ ԽԱՉԱՏՐՅԱՆ